

ԾՐԱԳԻՐ

«ՍԻՐՏ-ԹՈՔԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ: ՀԿԱ: ԸՍԿԱ: ՆՎԾ (ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԸՆԴԱՅՆՎԱԾ ՍԻՐՏ-ԱՆՈՔԱՅԻՆ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ: ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ)» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2022թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («Էրեբունի բժշկական կենտրոն»՝ ԵՊԲՀ Հետբուժական և շարունակական կրթության կենտրոնի անխթեզիոլոգիայի և ինտենսիվ թեապիայի ամբիոն) Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

Շաբաթ 1	
Օր 1	
10:00-12:30	Գործնական աշխատանք Նախնական գիտելիքների և հմտությունների գնահատում /նախաթեստ/, համայց ինտենսիվ թերապիայի բաժանմունքում(ԻԹԲ), անհետաձգելի բուժօգնության բաժանմունքում նրանց կառուցվածքը, հիգիենիկ նորմերը, սարքավորումները: Ոչ ռեանիմացիոն բաժանմունքներում սիրտ-թոքային վերակենդանացման և անհետաձգելի բուժօգնության իրականացման կազմակերպչական կանոնակարգերը և առանձնահատկությունները
12:30-13:00	Ընդմիջում
13:00-14:30	Դասախոսություն Մահ, հասկացությունը, փուլերը, տեսակներն ըստ ծագման: Ուղեղի մահ: Հաստատագրման մեթոդները: Տարիքային խմբերը ՍԹՎ-ն տեսակետից: Չափահասների և երեխաների արտահիվանդանոցային և ներհիվանդանոցային գոյատևման շրթաները: 2020 ՍԹՎ ուղեցույցները, համեմատությունը նախորդ ուղեցույցների հետ
Օր 2	
10:00-11:30	Դասախոսություն Չափահասների ՍԹՎ կենսապահովման միջոցառումներ
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	Գործնական աշխատանք Տուժածի զննում և դեպքի վայրի անվտանգության ապահովում: Շտապ օգնության ահազանգում և ԱԱԴ ձեռքբերում: Անոթազարկի ստուգում: 30 սեղմում և 2 ներփչում շրջփուլերի մեկնարկ (ՍԹՎ): Կրծքավանդակի սեղմումների իրականացման տեխնիկան
Օր 3	
10:00-11:30	Գործնական աշխատանք Շնչուղիների անցանելիության ապահովման տարբերակները: Բերան-բերան, բերան-դիմակ, պարկ-դիմակ շնչառության տեխնիկան: Երկու փրկարարով չափահասների ՍԹՎ
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	Գործնական աշխատանք

	Ավտոմատացված արտաքին դեֆիբրիլատորի կրառման տեխնիկան չափահասների և 8 տարեկանից բարձր երեխաների մոտ: Երկու փրկարարով ՍԹ-Վ՝ ԱԱԴ-ի կիրառմամբ
Օր 4	
10:00-11:30	Դասախոսություն 1 տարեկանից մինչև սեռահասունության տարիքի երեխաների ՍԹ-Վ: Մանուկների ՍԹ-Վ
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	Գործնական աշխատանք 1 տարեկանից մինչև սեռահասունության տարիքի երեխաների 1 փրկարարով ՍԹ-Վ: Մեկ և երկու ձեռքով կրծքավանդակի սեղմման տեխնիկան: 2 փրկարարով երեխաների ՍԹ-Վ: Երեխաների արհեստական շնչառության իրականացման առանձնահատկությունները: 1 փրկարարով մանուկների ՍԹ-Վ: Երկու մատով կրծքավանդակի սեղմման տեխնիկան: 2 փրկարարով մանուկների ՍԹ-Վ: Երկու բութ մատով-ձեռքերով շրջանակաձև կրծքավանդակի սեղմման տեխնիկան: Մանուկների արհեստական շնչառության իրականացման առանձնահատկությունները
Օր 5	
10:00-12:00	Գործնական աշխատանք 1-8 տարեկան երեխաների մոտ ԱԱԴ-ի կիրառման առանձնահատկությունները: Ընդլայնված շնչուղիներով ՍԹ-Վ առանձնահատկությունները: Չափահասների, երեխաների և մանուկների փրկարար շնչառություն: Օտար մարմնով շնչուղիների խցանման մեղմացում բոլոր տարիքային խմբերում
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	Գործնական աշխատանք մահվան տարբեր դեպքերի և իրավիճակների քննարկում, ՍԹ-Վ հիմնական կենսապահովման գործողությունների իրականացում մասնավոր իրավիճակներում: Հիմնական կենսապահովման միջոցառումների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների գնահատում: Թեստերի վերլուծություն
Շաբաթ 2	
Օր 1	
10:00-11:30	Դասախոսություն Ընդլայնված սիրտանոթային կենսապահովում՝ ԷՍԳ դիթմերի վերլուծություն: ԸՍԿԱ հիմնական դեղորայքը, ներմուծման ուղիները: Արդյունավետ թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները: ԸՍԿԱ գնահատման առանձնահատկությունները
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	Գործնական աշխատանք ԸՍԿԱ շնչառության կանգի ժամանակ: Լրացուցիչ թթվածնի մատակարարման եղանակներ: Շնչուղիների անցանելիության ապահովում: Օրոֆարինգեալ և նազոֆարինգեալ օդատարների տեղադրում: Շնչուղիների պարունակության արտաձծում: Ընդլայնված շնչուղիներով արհեստական շնչառություն: Վնասվածքով հիվանդների վարման առանձնահատկությունները
Օր 2	
10:00-12:00	Գործնական աշխատանք ԸՍԿԱ ՓՖ/առանց անոթազարկի փորոքային հաճախասրտության (ՓՀ) ժամանակ: Մանուալ դեֆիբրիլացիայի տեխնիկան: ԸՍԿԱ առանց անոթազարկի էլեկտրական ակտիվության ժամանակ: ԸՍԿԱ ասիստոլիայի ժամանակ
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	Գործնական աշխատանք ԸՍԿԱ հազվասրտության ժամանակ: Կարդիոստիմուլատորների կիրառումը: ԸՍԿԱ անկայուն հաճախասրտության ժամանակ: Կարդիոլեյսիայի տեխնիկան: ԸՍԿԱ կայուն հաճախասրտության ժամանակ: ԸՍԿԱ սուր կորոնար համախտանիշի ժամանակ: ԸՍԿԱ ինսուլտի ժամանակ
Օր 3	
10:00-12:00	Գործնական աշխատանք

	ԸՍԿԱ առանձնահատկությունները ջրահեղձման, օպիատներով թունավորումների, անաֆիլաքսիայի դեպքում, հղիների մոտ: Երկարատև ԸՍԿԱ պայմանները
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	Գործնական աշխատանք Տարբեր դիթմի և հաղորդչականության խանգարումներով պացիենտների ԸՍԿԱ դեպքերի քննարկում: Տեսական և գործնական գիտելիքների գնահատում: Թեստերի քննարկում
Օր 4	
10:00-11:30	Դասախոսություն Նորածինների վերակենդանացման ծրագիր: Նորածնային վերակենդանացման տեսությունը և սկզբունքները
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	Գործնական աշխատանք Նորածինների վերակենդանացման սկզբնական փուլերը: Արհեստական շնչառության սարքավորումների կիրառումը Վերակենդանացման դիմակի և պարկի կիրառում: Կրծքավանդակի սեղմում /ԿՍ/
Օր 5	
10:00-12:00	Գործնական աշխատանք Շնչափողի ինտուբացիա: Խողովակի ճշգրիտ տեղակայման ստուգումը: Ինտուբացիոն խողովակով մեկոնիալ պտղաջրերի մաքրումը շնչուղիներից: Ինտուբացիոն խողովակով արհեստական շնչառության իրականացումը: Օգտագործվող հիմնական դեղորայքը, ներմուծման ուղիները, դոզավորումը: Վաղաձին նորածինների վերակենդանացում
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	Գործնական աշխատանք Մասնավոր դեպքերի քննարկում, տեսական գիտելիքների և գործնական հմտությունների գնահատում

Թիրախային լսարան՝ բուժքույրեր, մանկաբարձներ:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-10 հոգի:

Դասընթացավար՝ Հասմիկ Հակոբի Քոչարյան: